


Փաստ. անվանումը	Ուսանողի գիտելիքի, կարողությունների և հմտությունների գնահատման կանոնակարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԾՄ-09-01
Հաստատման ամսաթիվը	22/08/2012
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	
Ներդրման/իրականացման պատասխանատու	Ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
24/02/2014	Վերանայվել է կարգն ամբողջությամբ	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ
09/02/2016	Վերանայվել է կարգն ամբողջությամբ	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ
06/02/2018	Կատարվել է մասնակի փոփոխություն	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ



1. Հղումներ

- « Կրթության մասին» օրենք
- «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենք
- «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» օրինակելի կարգ
- « ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման /ազատման/ և վերականգնման» կարգ

2. Ընդհանուր դրույթներ

Սույն Կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) սահմանում է Եվրասիա միջազգային համալսարանի (այսուհետ՝ համալսարան) բոլոր կրթական աստիճաններում սովորող ուսանողների գիտելիքների և կարողությունների ընթացիկ, միջանկյալ ու վերջնական ստուգման և գնահատման կանոնները:

3. Գնահատման կարգը

- 3.1. Համալսարանում առկա են ստուգման երեք հիմնական ձև՝ ընթացիկ, միջանկյալ և վերջնական,
- 3.2. Համաձայն սույն կարգի՝ յուրաքանչյուր դասընթաց գնահատվում է 100 միավորանոց համակարգով,
- 3.3. Յուրաքանչյուր կուրսի համար մշակվում է մեկ մատյան՝ նախատեսելով ծանոթությունների բաժին, որտեղ նշվում են, թե որ բաղադրիչի համար է գնահատվում ուսանողը,
- 3.4. Դասընթացի գնահատման սանդղակը և առանձնահատկությունները սահմանվում և ներկայացվում են առարկայական ծրագրում:
- 3.5. Դասընթացի ընդհանուր գնահատականի մեջ հաշվի են առնվում առարկայական ծրագրում սահմանված բաղադրիչները, որոնք ընտրվում են սույն կարգի Հավելված 1-ում ներկայացված ցանկից:
- 3.6. Բոլոր ուսանողները պետք է անցնեն միջանկյալ ստուգում և հանձնեն վերջնական քննություններ այն դասընթացներից, որոնք անցել են տվյալ կիսամյակի ընթացքում (եթե առարկայական ծրագրով ստուգման այլ ձև նախատեսված չէ):
- 3.7. Միջանկյալ ստուգումը և վերջնական քննություններն անցկացվում են բանավոր, գրավոր, էլեկտրոնային, համակցված /էլեկտրոնային և գրավոր/: Յուրաքանչյուր առարկայի քննության կազմակերպման ձևը առաջարկվում է ամբիոնի կողմից, հաստատվում գիտխորհրդի նիստում և նշվում է առարկայական ծրագրում:

- 3.8. Առարկայական ծրագրում նշված գնահատման սանդղակից դասախոսը կարող է շեղվել՝ նախապես գրավոր հիմնավորում ներկայացնելով համալսարանի մեթոդիտրիտորդ և ստանալով համաձայնություն:

4. Արդյունքների ամփոփում և գրանցում

- 4.1. Ուսանողների ընթացիկ, միջանկյալ և վերջնական գնահատականները դասախոսի կողմից մուտքագրվում են տեղեկագրում, իսկ յուրաքանչյուր ամբիոնի մեթոդիստր համալսարանի ներքին էլեկտրոնային տեղեկատվական համակարգում (studentM):
- 4.2. Գնահատման արդյունքները չեն փակցվում, չեն հայտարարվում. ուսանողն իր անհատական ծածկանունով համալսարանի ներքին տեղեկատվական համակարգից տեղեկանում է գնահատման արդյունքներից կամ իր գնահատման արդյունքների մասին տեղեկատվությունը ստանում է էլեկտրոնային փոստով:

5. Միջանկյալ ստուգման և վերջնական քննությունների գնահատումը

- 5.1. Միջանկյալ և վերջնական քննությունները գնահատվում են 20 բալով, որից՝
- 0-7 միավորին համապատասխանում է 2 (անբավարար) գնահատականը,
 - 8 –12–ին՝ 3 (բավարար),
 - 13 – 17-ին՝ 4 (լավ),
 - 18 –20–ին՝ 5 (գերազանց):
- 5.2. Յուրաքանչյուր քննություն /միջանկյալ, վերջնական/ գնահատվում է առանձին:
- 5.3. Գրավոր քննության տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը պետք է համապատասխանի քննությանը հատկացվող ժամանակահատվածին:
- 5.4. Միջանկյալ ստուգումից «անբավարար» գնահատական ստանալու կամ քննության չներկայանալու դեպքում ուսանողները չեն վերահանձնում:
- 5.5. Ուսումնական պլանով սահմանված անհատական աշխատանքը չներկայացնելու դեպքում ուսանողը չի կարող մասնակցել վերջնական քննության, նշանակվում են նոր ժամկետներ, ժամկետները չպահպանելու դեպքում ուսանողը անցնում է կուրսի կրկնություն: Ինքնուրույն աշխատանքը դասախոսի կողմից դասընթացի առարկայական ծրագրում աստղանիշով նշված լինելու դեպքում՝ գործում է նույն ընթացակարգը:
- 5.6. Վերջնական քննությունը ձախողելու դեպքում ուսանողը վերահանձնում է առարկան՝ անկախ ամփոփիչ գնահատականի հանրագումարից:
- 5.7. Քննաշրջանում քննության չներկայանալը քննական տեղեկագրում նշվում է «չի ներկայացել» բառերով:

6. Ամփոփիչ գնահատական

6.1. Առարկայի ամփոփիչ գնահատման մեջ բոլոր առարկաների համար պարտադիր են Հավելված 1-ում ներկայացված բաղադրիչներից միջանկյալ(25%) և վերջնական քննությունները (35%), ներկայությունը (5%) և լսարանային ակտիվ մասնակցությունը (15%` ներառյալ 5% հետազոտական կարողությունները): Մնացյալ 20%-ը կարող է տրոհվել տարբեր բաղադրամասերի, որոնք նախապես սահմանվում են առարկայական ծրագրում և ենթակա են փոփոխության դասախոսի և ամբիոնի վարիչի փոխհամաձայնությամբ (կարող է ներառել արտալսարանային անհատական կամ ինքնուրույն աշխատանքներ):

Օրինակ. Միջանկյալ /Մ/ ստուգմանը հատկացված է 25% և վերջնական /Վ/ 35%, իսկ ուսանողը դրանցից համապատասխանաբար ստացել է, օրինակ, 16 և 14 միավոր, ապա այդ գործոններից նա կվաստակի.

$$Մ \quad 16 * 0.25 = 4 \text{ միավոր}$$

$$Վ \quad 14 * 0.35 = 4.9 \text{ միավոր } 20\text{-ից:}$$

6.2. Ռեյտինգային միավորներն ուսանողի աստիճանակարգման գլխավոր ցուցիչներն են: Ռեյտինգային միավորները նշվում են 0-ից մինչև 100, թվանշանները` 0-ից մինչև 4: Տառային նշանակումները գործում են նյութը և գիտելիքները գնահատելու համար:

6.3. Յուրաքանչյուր առարկայի վերջնական քննության ավարտից հետո ուսանողի ստացած գնահատականը հաշվարկվում է ստորև բերված 100 բալանոց համակարգով, հետևյալ օրինակին համապատասխան. ուսանողը, եթե կիսամյակի վերջում, օրինակ «Տնտեսագիտության տեսություն 1» (4 կրեդիտ) առարկայից ստացել է հետևյալ գնահատականները.

- ներկայություն` 0.75
- լսարանային ակտիվությունից` 2.4
- ինքնուրույն աշխատանքից` 3.2
- միջանկյալ քննությունից` 3.75
- վերջնական քննությունից` 5.6, ապա

նրա ամփոփիչ գնահատականը հավասար կլինի $0.75+2.4+3.2+3.75+5.6=15.7$, որն էլ վերջում բազմապատկվում է հինգով $/15.7*5= 78.5/$, այսինքն նշված աղյուսակին համապատասխան` ուսանողի ռեյտինգային միավորը կլինի 79, տառային նշանակումը` B+, իսկ թվանշանը` 3.3:

6.4. Որոշ դասընթացներ և կրթական մոդուլներ գնահատվում են S կամ U գնահատականներով: S-ը նշանակում է, որ ուսանողը հասել է առաջադիմության մի մակարդակի, որը դասախոսն ուսումնառության տվյալ մակարդակի համար համարում է բավարար (յուրացրել է նյութի առնվազն 40 տոկոսը): U գնահատականը նշանակվում է, երբ ուսանողը չի բավարարում այդ չափանիշները: Թե՛ S և թե՛ U գնահատականների դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, և դրանք չեն

օգտագործվում ուսանողի միջին որակական գնահատականը հաշվարկելիս: Տ գնահատականի դեպքում ուսանողը վաստակում է տվյալ դասընթացին հատկացված կրեդիտները, իսկ Ս գնահատականի դեպքում՝ ոչ:

- 6.5. Ուսանողին «անավարտ» (I) գնահատական կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ ուսանողի աշխատանքի անավարտ մասը փոքր է, աշխատանքն անավարտ է դասախոսի համար ընդունելի պատճառներով: Անավարտության գնահատականը կարող է փոխարինվել դրական գնահատականով միայն այն դեպքում, երբ անավարտ աշխատանքը լրացվում է հաջորդող կիսամյակի ընթացքում: Այս դեպքում ուսանողի ընթացիկ միջին որակական գնահատականը շարունակում է հիմնված մնալ միայն ավարտված դասընթացների կրեդիտների և գնահատականների վրա:
- 6.6. Ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն ստուգման օրը դիմումի առկայության և դրան հաջորդող 5 աշխատանքային օրերի ընթացքում ամբիոնի կողմից ընդունվող անհերքելի պատճառների դեպքում /օր. առողջական խնդիրների/:
- 6.7. Մույն կանոնակարգով չնախատեսված դեպքերում ամբիոնի ներկայացմամբ որոշումը կայացվում է գիտական խորհրդի կողմից:

7. Գնահատման համակարգը

Գնահատականը	Ռեյտինգային միավորը	Տարային նշանակումը	Թվանշան	Գիտելիքի գնահատման հիմնական չափանիշները
գերազանց	95-100	A+	4.0	Ուսանողը ցուցաբերել է անթերի կամ աննշան թերություններով գիտելիքներ. - բանավոր կամ գրավոր խոսքը եղել է հստակ, հիմնավորված, - առկա է մտքերի ներկայացման տրամաբանական ընթացք, - ցուցաբերել է վերլուծական մտածողություն (համապատասխան պահանջի առկայության դեպքում): - դասընթացը յուրացրել է ամբողջությամբ, - ձեռք է բերել համակարգված գիտելիքներ, - ազատ տիրապետում է տերմիններին, - կարողացել է կատարել ծրագրից բխող բոլոր առաջադրանքները:
	87-94	A	4.0	
	81-86	A-	3.7	
Լավ	75-80	B+	3.3	- Յուրացրել է ծրագրի առանցքային խնդիրները և հիմնական բովանդակությունը, - կարողանում է օգտագործել մասնագիտական լեզուն և տերմինները, - մտքերը շարադրում է հիմնականում տրամաբանորեն, երբեմն, սակայն, ոչ
	67-74	B	3.0	
	61-66	B-	2.7	

				հիմնավորված:
բավարար	55-60	C+	2.3	- Ծրագրի բովանդակության իմացությունը հիմնականում մակերեսային է և հատվածային, - դժվարությամբ է օգտագործում մասնագիտական լեզուն և տերմինները, - ոչմիջոտ է մտքերը շարադրում տրամաբանված, բացակայում են հիմնավորումները, - դժվարությամբ է կատարում ծրագրից բխող հանձնարարությունները:
	46-54	C	2.0	
	40-45	C-	1.7	
Անբավարար (ներկայացել է, սակայն չի կարողացել բավարարել պահանջները)	21-39	D	1.0	- ծրագրի բովանդակության յուրացման առումով ունի յուրք բացթողումներ, - չի կարողանում բացատրել և կիրառել հիմնական տերմինները, - գրավոր և բանավոր խոսքը հստակ չէ, անհասկանալի, չի արտահայտում իրական բովանդակությունը, - չի կարողանում կատարել ծրագրից բխող առաջադրանքները:
Չներկայացած	0-20	F	0	
Անավարտ	-	I	-	
Ստու•ված	<40	S	-	
Չստու•ված	>40	U	-	

8. Դասընթացի կրկնություն, վերահանձնում

- 8.1. Ուսանողների թույլատրվում է վերահանձնել այն դասընթացների քննությունները, որոնցից նրանք ստացել են D, F կամ U գնահատականներ:
- 8.2. Ուսանողները չեն կարող կրկնել կամ վերահանձնել այն դասընթացները, որոնցից ստացել են A,B,C կամ S գնահատականներ:
- 8.3. Ուսանողի ՄՈԳ-ը հաշվելիս հաշվի է առնվում վերջին գնահատականը:
- 8.4. Հանրագումարային միավորը >40 արդյունք գրանցելու դեպքում Ուսանողը վերահանձնում է դասընթացը ամբողջ ծրագրի հիման վրա: Անկախ վաստակած դրական արդյունքից քննությունը գրանցվում է 40 միավոր:
- 8.5. Ակադեմիական պարտքերի մարման ժամկետից հետո, եթե առարկայական պարտքերի կրեդիտների գումարը չի գերազանցում 12-ը, ապա սահմանված կարգի համաձայն ուսանողը կարող է առարկայական պարտքերը մարել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ կրկնելով դասընթացները:

9. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

9.1. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացվում է նրա ակադեմիական տեղեկագրում (հավելված 2) յուրաքանչյուր ուսումնական կիսամյակում հատկացվում է երկու տող: Առաջինը վերաբերում է միայն տվյալ կիսամյակի առաջադիմությանը, իսկ երկրորդը՝ ամբողջացնում է ուսանողի ամփոփիչ տվյալները մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը: Տողերից յուրաքանչյուրը ներառում է հետևյալ չորս քանակական ցուցանիշները՝ Ծրագրային կրեդիտներ, Որակավորման կրեդիտներ, Վարկանիշային միավորներ և Միջին որակական գնահատական:

Ծրագրային Կրեդիտներ: Այս ընդհանրացված արդյունքը բոլոր այն դասընթացների և ուսումնական մոդուլների գումարային կրեդիտն է, որոնք կիրառելի են տվյալ կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու համար և որոնցից ուսանողը ստացել է առնվազն բավարար գնահատական կամ ստուգարք:

Որակավորման Կրեդիտներ: Այս ընդհանրացված արդյունքը իր մեջ ներառում է ծրագրային կրեդիտների միայն այն մասը, որոնց համապատասխանող դասընթացները կամ ուսումնական մոդուլները գնահատվել են թվային համարժեք ունեցող տառային գնահատականներով:

$$ՈԿ = \sum_{i=1}^k \text{կրեդիտ}$$

որտեղ i -ն և k -ն⁹ թվային համարժեք ունեցող տառային գնահատականներով գնահատված դասընթացների կամ ուսումնական մոդուլների համապատասխանաբար համարը և քանակն են:

Վարկանիշային Միավորներ: Ակադեմիական տեղեկագրում տառային գնահատականները ձևափոխվում են համարժեք թվային միավորների, վերջիններս էլ վարկանիշային միավորների՝ դասընթացի կամ ուսումնական մոդուլի յուրաքանչյուր կրեդիտի համար: Որևէ դասընթացից (կամ կրթական մոդուլից) ստացված վարկանիշային միավորը որոշվում է տվյալ դասընթացի համար սահմանված կրեդիտների և ուսանողի ստացած գնահատականի արտադրյալով: Արդյունարար վարկանիշային միավորը ներառում է որակավորման կրեդիտների հաշվարկում ներառված բոլոր դասընթացներից ստացված վարկանիշային միավորները: Ակադեմիական տեղեկագրում այս ընդհանրացված ցուցանիշը ներկայացնում է ուսանողի վաստակած վարկանիշային միավորների գումարային քանակը՝ ամփոփման տվյալ ժամանակահատվածի (առանձին կիսամյակի) և ուսումնառության տվյալ ժամանակահատվածի համար: Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$ՎՄ = \sum_{i=1}^k \text{Կրեդիտ} \times \text{ԹԱ}_i$$

որտեղ ԹԱ_i -ն դասընթացից կամ ուսումնական մոդուլից ուսանողի ստացած գնահատականի թվային համարժեքն է:

Միջին Որակական Գնահատական: Այս ցուցանիշը ուսանողի գնահատականների կշռված միջին արժեքն է, որը հաշվարկվում է՝ վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների վրա բաժանելով՝

$$\text{ՍՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ՈԿ}}$$

- 9.2. Հաշվարկի արդյունքները կլորացվում են մինչև 1/100-ի ճշտությամբ: Տարբերակում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և ամփոփիչ (հաշվարկված մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը) միջին որակական գնահատականներ (ՄՈԳ):
- 9.3. Ուսանողից պահանջվում է ապահովել տվյալ կրթական աստիճանի համար ԲՈւՀ-ի կողմից սահմանված նվազագույն անփոփիչ ՄՈԳ՝ բավարար առաջադիմություն ունենալու համար:

10. Ուսանողի ակադեմիական կարգավիճակը

10.1. Ըստ ուսման առաջադիմության ուսանողները դասակարգվում են որպես՝ առաջադիմող, փորձնական շրջանում (նպատակն է ուսանողին հնարավորություն տալ այդ շրջանում ուղղել թերություններն ու բացթողումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը՝ ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան) գտնվող և հեռացման ենթակա ուսանողներ:

1. Ուսանողը համարվում է **առաջադիմող**, եթե.

- ունի համապատասխան առաջընթաց՝ կիսամյակային կրեդիտների անհրաժեշտ նվազագույն քանակի կուտակման պահանջը կատարելու առումով, այսինքն կուտակել է առնվազն 30 կրեդիտ,
- ապահովում է տվյալ կրթական աստիճանի համալսարանի կողմից սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն արժեքը՝ բակալավրիատում և մագիստրատուրայում համապատասխանաբար 1.7 և 2.3 (ՄՈԳ):

2. Ուսանողը հայտնվում է **փորձաշրջանում**, եթե.

- ունի առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր

3. **Հեռացման** ենթակա են այն ուսանողներն, ովքեր.

- քննաշրջանում երեք և ավելի առարկաներից կամ մեկ առարկայից երեք անգամ ստացել են «անբավարար» գնահատական
- կիսամյակի արդյունքներով չեն հավաքել անհրաժեշտ գումարային կրեդիտներ,

- 10.2. Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ամբիոնը ամփոփում է ուսանողների առաջադիմության արդյունքները և տեղեկացնում փորձնական շրջանում գտնվող կամ հեռացման ենթակա ուսանողներին, ամբիոնի վարիչների և համապատասխան մարմիններին:

Հավելված 1. Հիմնական բաղադրիչներ

Գնահատման բաղադրիչներին տրամադրվող միավորը (%) նախապես ներկայացվում է առարկայական ծրագրում, սակայն առաջարկությունների և անհրաժեշտության դեպքում հնարավոր է վերանայում, փոփոխություն:

Դասընթացի գնահատման բաղադրիչներ

N	Բաղադրիչի անվանումը	Հնարավոր տարբերակներ ¹	%
Ն	Ներկայություն	Հաճախումների հաշվառում կատարում է դասախոսը (կամ նրա հսկողությամբ խմբի ավագը) համապատասխան գրանցամատյանում, իսկ շաբաթվա տվյալները ներքին տեղեկատվական համակարգ է մուտքագրում ամբիոնի մեթոդիստը:	5
ԼԱ	Լսարանային ակտիվություն	Գնահատականի 10% որոշվում է սեմինարիների, լսարանային գործնական աշխատանքների, լսարանային թիմային աշխատանքների, ընթացիկ թեստի (quiz) հիման վրա, իսկ 5% ուղղվում է հետազոտական կարողությունների գնահատմանը:	15
ԱԱ	Արտալսարանային աշխատանք	Նշվում են այն թեմատիկ անհատական կամ ինքնուրույն աշխատանքները, որոնք պեք է կատարեն ուսանողները <ul style="list-style-type: none"> • մշակումներ գիտական գրականությունից, • խնդիրներ, • դեպքի ուսումնասիրություններ և վերլուծություններ, • քանակական կամ որակական ուսումնասիրություններ և վերլուծություններ, • ընթերցանություն, • մասնագիտական և կրթական նպատակներով տեսահոլովակի նկարահանում կամ ֆոտոնկարահանում (կամ հավաքագրում), • մասնագիտական, կրթական նպատակներով ձայնագրությունների իրականացում (օրինակ փորձագետների հետ հարցազրույց), • ներկայացման պատրաստում, • կրթական բլոգի, կայքի ստեղծում, • էլեկտրոնային կամ տպագիր թերթիստեղծում, • գիտակրթական ստենդի ստեղծում, • հոդվածի կամ նյութի քննադատական վերլուծություն (critique) 	20 (Բաշխումն ըստ տվյալ 2 բաղադրիչների նախապես հստակեցվում և ներկայացվում է առարկայական ծրագրում)

¹Ներկայացված են հնարավոր տարբերակներ. ցանկը կարելի է փոփոխել, համալրել

		Անհատական աշխատանքները նախատեսվում են ուսումնական պլանում, իսկ պանջները ներկայացված են անհատական աշխատանքների մեթոդական ցուցումներում: Անհատական աշխատանքը չներկայացնելու դեպքում, ուսանողը չի կարող մասնակցել վերջնական քննության: Ինքնուրույն աշխատանքների պահանջները պետք է մանրամասն նկարագրվեն դասախոսի կողմից: Ինքնուրույն աշխատանքները կարող են իրականացվել անհատապես կամ թիմով:	
ՄՄ	Միջանկյալ ստուգում	Միջանկյալ ստուգու մը ուսանողի յուրաքանչյուր կիսամյակի սկզբում առաջին 2 ամսվա ընթացքում ստացած մնացորդային գիտելիքների ստուգումն է	25
ՎՔ	Վերջնական քննություն	Վերջնական քննությունը կազմակերպվում է յուրաքանչյուր կիսամյակի վերջում և ներառում է հարցեր նաև միջանկյալ քննության հարցաշարից	35

Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատման (20 միավոր)

N	Բաղադրիչի անվանումը	Միավորը
1.	Տեխնիկական գնահատում	3
2.	Բովանդակության տեսական հատվածի որակի, այդ թվում գրականությունից օգտվելու կարողության գնահատում	4
3.	Խտացված արդյունքների և գործնական հմտությունների դսևորման կարողության գնահատում	4
4.	PPT	2
5.	Բառապաշարը, խոսքի որակը, սահունությունը, շարահյուսությունը	3
6.	Հարցերի պատասխանելը առնվազն 2 հարց	4

Պրակտիկայի գնահատման բաղադրիչներ

N	Բաղադրիչի անվանումը	%
1.	Հաճախում	15
2.	Պրակտիկայի վայրի ղեկավարի գնահատականը	15
3.	Ամբիոնի ղեկավարի գնահատականը	30
4.	Հաշվետվության պաշտպանություն*	40

Հաշվետվության պաշտպանությունը գնահատվում է 20 միավորով /բաղադրիչները/

N	Բաղադրիչի անվանումը	Միավորը
1.	Տեխնիկական գնահատում	2
2.	PPT	2
3.	Նորույթի ներկայացում	6
4.	Հարցերի պատասխանելը (առնվազն 2 հարց)	4
5.	Ստացած արդյունքների և գործնական հմտությունների դսևորելու կարողություն	6

Ամփոփիչ առեստավորման գնահատման բաղադրիչներ

N	Բաղադրիչի անվանումը	%
1.	Հարցերի ճիշտ ընկալումը և պատասխանի ձևակերպման ու ներկայացման որակը	30
2.	Պատասխանի ճշգրտությունը, հստակությունը և լիարժեքությունը	35
3.	Հարցերի վերաբերյալ տրամաբանական եզրահանգում	35

Ավարտական աշխատանքի գնահատման բաղադրիչներ

N	Բաղադրիչի անվանումը	%
1.	Թեմայի արդիականությունը	20
2.	Բովանդակության ամբողջականությունը	30
3.	Կատարման ինքնուրույնությունը	20
4.	Ձևակերպման և ներկայացման որակը	30

Մագիստրոսական թեզի գնահատման բաղադրիչներ

N	Բաղադրիչի անվանումը	%
1.	Թեմայի արդիականությունը	10
2.	Տեսական հիմնավորում	30
3.	Գործնական հետազոտության որակը	40
4.	Ձևակերպման և ներկայացման որակը	20

Հավելված 2.

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Անձնական համարը	Անուն Հայրանուն Ազգանուն
------------------------	---------------------------------

Մասնագիտություն	Մասնագիտացում	Որակավորում
------------------------	----------------------	--------------------

20 -20
 ուստարի

Աշխատանքային կիսամյակ

Դասընթացի անվանումը	Կրեդիտներ	Ռեյտինգային միավոր	Նիշը	Թվային միավորներ
---------------------	-----------	--------------------	------	------------------

Դասընթաց 1	5	86	A-	3.7
Դասընթաց 2	5	60	C+	2.3
Դասընթաց 3	4	65	B-	2.7
Դասընթաց 4	3	65	B-	2.7
Դասընթաց 5	3	90	A	4
Դասընթաց 6	5	66	B-	2.7
Դասընթաց 7	2	58	C+	2.3
Դասընթաց 8	3	40	S	-

Ծրագրային կրեդիտներ	Որակավորման կրեդիտներ	Վարկանիշային Միավորներ	Կիսամյակային Միջին որակավորման գնահատական
30	27	79.00	2.93

Լրացված Ծրագրային կրեդիտներ	Լրացված Որակավորման կրեդիտներ	Լրացված Վարկանիշային Միավորներ	Ամփոփիչ Միջին որակավորման գնահատական
30	27	79.00	2.93